

Յագկերտի, «ըստ առաջին կարգի օրինացն արքունի, կ'ըսէ Եղիշէ, արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր ի թագաւորէն. կապէր եւ զպատիւ վարսին եւ զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, եւ զկըռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով եւ ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, եւ զգինդսն յականջսն, եւ զգոռմարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբն» (117): Եւ ոչ մէկ շրջանին մեծատանց կողմանէ անխնամ թողուած չէ «հանդերձիցն գեղեցկութիւն» (Գր. Վրդ. Ողբ), ժամանակն ինչ ձեւ ալ տուած լինէր անոնց տարազին, զոր պիտի ցոյց տամ ուրիշ հատորի մը մէջ:

Անոնց զարդարանաց շատ կարեւոր մասն էին՝ մանաւանդ երիցագոյն դարերուն՝ զէնքերը, որոց մին կամ միւսն ըստ դիպաց յիշուած կը գտնենք: Զոր օրինակ Պապ՝ Տերենտի եւ Բատ սահառունի՝ Վարազդատայ խնճոյից մէջ «զերանն յազդեր» ունէին, որ է դաշոյնը (Փաւս. 233, '37): Գնէլ անձեւացի՝ Տերենտի նոյն ընթրեաց մէջ զործածեց «զիւր սոռսերն» (նոյն, 233): Դղակ մարդպետ՝ արքունի կոչնոց պահուն կախած էր երեք զէնք. «զքոռն եւ զսոռսերն... եւ զերանն» (նոյն, 204): Եւ Խոսրով զարդմանացի՝ Շապհոյ